ԱԺԲԳ

ՏԵՂԵԿԱՆՔ

2020-2022թթ. Հայաստանի Հանրապետության պետական պարտքի վերաբերյալ (օգոստոս ամսվա վերջի դրությամբ)









2022թ. օգոստոսի 31-ի դրությամբ՝

1) ՀՀ պետական պարտքը կազմել է 4 տրիլիոն 44.5 մլրդ ՀՀ դրամ, նվազելով 2021թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 8.7%-ով, 2021թ. օգոստոսի 31-ի նկատմամբ՝ 8.5%-ով, իսկ 2020 թվականի օգոստոսի 31-ի նկատմամբ աճելով 4.2%-ով,

2) ՀՀ կառավարության պարտքը կազմել է 3 տրիլիոն 825.7 մլրդ ՀՀ դրամ, նվազելով 2021թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ 9.1%-ով, 2021թ. օգոստոսի 31-ի նկատմամբ՝ 8.6%-ով, իսկ 2020թ. օգոստոսի 31-ի նկատմամբ աճելով 4.9%-ով,

3) ՀՀ Կենտրոնական բանկի արտաքին պարտքը կազմել է 218,8 մլրդ ՀՀ դրամ, նվազելով 2021թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 0.5%-ով, 2021թ. օգոստոսի 31-ի նկատմամբ՝ 5.2%-ով, իսկ 2020թ. օգոստոսի 31-ի նկատմամբ՝ 7,4%-ով,

4) ՀՀ պետական պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 9 մլրդ 992.1 մլն ԱՄՆ դոլար, աճելով 2021թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 8.3%-ով, 2021թ. օգոստոսի 31-ի նկատմամբ՝ 11.6%-ով, իսկ 2020թ. օգոստոսի 31-ի նկատմամբ՝ 25.4%-ով,

5) ՀՀ կառավարության պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 9 մլրդ 451.6 մլն ԱՄՆ դոլար, աճելով 2021թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 7.8%-ով, 2021թ. օգոստոսի 31-ի նկատմամբ՝ 11.4%-ով, իսկ 2020թ. օգոստոսի 31-ի նկատմամբ՝ 26.3%-ով,

6) ՀՀ ԿԲ արտաքին պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 540,6 մլն. ԱՄՆ դոլար, աճելով 2021թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 18.1%-ով, 2021թ. օգոստոսի 31-ի նկատմամբ՝ 15.6%-ով, իսկ 2020թ. օգոստոսի 31-ի նկատմամբ՝ 11.5%-ով,

7) ՀՀ կառավարության արտաքին պարտքը կազմել է 2 տրիլիոն 326.6 մլրդ ՀՀ դրամ, նվազելով 2021թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 21.7%-ով, 2021թ. օգոստոսի 31-ի նկատմամբ՝ 23,8%-ով, իսկ 2020թ. օգոստոսի 31-ի նկատմամբ՝ 14.3%-ով,

8) ՀՀ կառավարության ներքին պարտքը կազմել է 1 տրիլիոն 499.1 մլրդ ՀՀ դրամ, աճելով 2021թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 21.1%-ով, 2021թ. օգոստոսի 31-ի նկատմամբ՝ 32.1%-ով, իսկ 2020թ. օգոստոսի 31-ի նկատմամբ՝ 61.0%-ով,

9) ՀՀ Կենտրոնական բանկի արտաքին պարտքը կազմել է 218,8 մլրդ ՀՀ դրամ, նվազելով 2021թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 0.5%-ով, 2021թ. օգոստոսի 31-ի նկատմամբ՝ 5.2%-ով, իսկ 2020թ. օգոստոսի 31-ի նկատմամբ՝ 7,4%-ով,

10) ՀՀ կառավարության արտաքին պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 5 մլրդ 747,9 մլն ԱՄՆ դոլար, նվազելով 2021թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ 7.2%-ով, 2021թ. օգոստոսի 31-ի նկատմամբ՝ 7.1%-ով, իսկ 2020թ. օգոստոսի 31-ի նկատմամբ աճելով 3.2%-ով,

11) ՀՀ կառավարության ներքին պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 3 մլրդ 703,6 մլն ԱՄՆ դոլար, աճելով 2021թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 43.7%-ով, 2021թ. օգոստոսի 31-ի նկատմամբ՝ 61%-ով, իսկ 2020թ օգոստոսի 31-ի նկատմամբ՝ 93,9%-ով,

12) ՀՀ ԿԲ արտաքին պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 540,6 մլն. ԱՄՆ դոլար, աճելով 2021թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 18.1%-ով, 2021թ. օգոստոսի 31-ի նկատմամբ՝ 15.6%-ով, իսկ 2020թ. օգոստոսի 31-ի նկատմամբ՝ 11.5%-ով:

ԱԺԲԳ









ՀՀ կառավարության արտաքին վարկերի գծով պարտքը 2022թ. օգոստոսի 31-ի դրությամբ կազմել է 4 մլրդ 229.7 մլն ԱՄՆ դոլար, նվազելով 2021թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ 5.6%-ով, 2021թ. օգոստոսի 31-ի նկատմամբ՝ 6.3%-ով, իսկ 2020թ. օգոստոսի 31-ի նկատմամբ՝ 8.2%-ով:

2022թ. օգոստոսի 31-ի դրությամբ ՀՀ կառավարության արտաքին վարկերի գծով պարտքի կառուցվածքում՝

1) միջազգային կազմակերպությունների բաժինը կազմել է 79.26%, ինչը ավել է 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ արձանագրված ցուցանիշից 1.88 տոկոսային կետով, 2021թ. օգոստոսի 31-ի ցուցանիշից՝ 1.55 տոկոսային կետով, 2020թ. օգոստոսի 31-ի ցուցանիշից՝ 2.43 տոկոսային կետով,

2) օտարերկրյա պետությունների բաժինը կազմել է 20.42%, ինչը պակաս է 2021թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ 1.83 տոկոսային կետով, 2021թ. օգոստոսի 31-ի համեմատությամբ՝ 1.47 տոկոսային կետով, իսկ 2020թ. օգոստոսի 31-ի համեմատությամբ՝ 2.3 տոկոսային կետով,

3) առևտրային բանկերի բաժինը կազմել է 0.32, ինչը պակաս է 2022թ. դեկտեմբերի 31-ի ցուցանիշից՝ 0.05 տոկոսային կետով, 2021թ. օգոստոսի 31-ի ցուցանիշից՝ 0.08 տոկոսային կետով, իսկ 2020թ. օգոստոսի 31-ի ցուցանիշից՝ 0.13 տոկոսային կետով:

2022թ. հունվար-օգոստոսին ՀՀ կառավարության պարտքի գծով վճարված՝

1) տոկոսավճարները կազմել են 110.78 մլրդ դրամ, ինչը 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 6,62 մլրդ դրամով, իսկ 2020թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 18.98 մլրդ դրամով:

2) ներքին տոկոսավճարները կազմել են 64.03 մլրդ դրամ, ինչը 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 6.18 մլրդ դրամով, իսկ 2020թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ՝ 18.26 մլրդ դրամով:

3) արտաքին տոկոսավճարները կազմել են 46.75 մլրդ դրամ, ինչը 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 0.44 մլրդ դրամով, իսկ 2020թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ՝ 0.72 մլրդ դրամով:

ԱԺԲԳ

Պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը փոխառու զուտ միջոցների հաշվին (առանց մուրհակների), մլրդ դրամ



Պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը ներքին և արտաքին փոխառու զուտ միջոցների հաշվին (առանց մուրհակների), մլրդ դրամ



ՀՀ կառավարության կողմից արտաքին վարկերի ստացումը և սպասարկումը, մլն ԱՄՆ դոլար



ՀՀ կառավարության կողմից արտաքին վարկերի ստացումը և սպասարկումը, մլն ԱՄՆ դոլար



2022թ. հունվար-օգոստոսի պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը՝

1) փոխառու զուտ միջոցների հաշվին կազմել է 151.17 մլրդ դրամ, ինչը պակաս է 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ 318.62 մլրդ դրամով, իսկ 2020թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ՝ 138.27 մլրդ դրամով,

2) ներքին փոխառու միջոցների հաշվին կազմել է 158.69 մլրդ դրամ, ինչը 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 25.76 մլրդ դրամով, իսկ 2020թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ պակաս է 33.64 մլրդ դրամով,

3) արտաքին փոխառու միջոցների հաշվին կազմել է -7.52 մլրդ դրամ, ինչը պակաս է 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ՝ 344.38 մլրդ դրամով, իսկ 2020թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ՝ 104.63 մլրդ դրամով:

ՀՀ կառավարության կողմից 2022թ. հունվար-օգոստոսին՝

1) արտաքին վարկերի սպասարկման նպատակով վճարվել է 46.54 մլն դոլար տոկոսավճար, ինչը 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 3.9%-ով, իսկ 2020թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 29%-ով,

2) արտաքին վարկերի սպասարկման նպատակով մարվել է 150.66 մլն դոլարի մայր գումար, ինչը 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 1.3%-ով, իսկ 2020թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 8%-ով,

3) ստացվել են 130.73 մլն դոլարի վարկային միջոցներ, ինչը 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 80.4%-ով, իսկ 2020թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 61.5%-ով,

4) արտաքին վարկերի սպասարկման նպատակով վճարվել է 179.2 մլն դոլար (տոկոսավճար և մայր գումարի մարում), ինչը 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 10.9%-ով, իսկ 2020թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 12.6%-ով:

ԱԺԲԳ

Պետական պարտատոմսերի ծավալը, մլրդ դրամ



Պետական պարտատոմսերի միջին ժամկետայնությունը, օր



ՀՀ Կառավարության պարտքի միջին տոկոսադրույքը, %



ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքը, ըստ թողարկման (ներգրավման) ժամկետայնության, %



2022թ. օգոստոսի 31-ի դրությամբ՝

1) Շրջանառության մեջ գտնվող ՀՀ պետական պարտատոմսերի ծավալը կազմել է 1 տրիլիոն 398.1 մլրդ դրամ, ինչը 2021թ. դեկտեմբերի 31-ի, 2021թ. օգոստոսի 31-ի և 2020թ. օգոստոսի 31-ի համեմատությամբ ավել է համապատասխանաբար՝ 189.2, 305.5 և 536.2 մլրդ դրամով,

2) Շրջանառության մեջ գտնվող ՀՀ պետական պարտատոմսերի միջին ժամկետայնությունը կազմել է 3506 օր, ինչը 2021թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ պակաս է 255 օրով, 2021թ. օգոստոսի 31-ի համեմատությամբ պակաս է 496 օրով, իսկ 2020թ. օգոստոսի 31-ի համեմատությամբ պակաս է 437 օրով:

ՀՀ կառավարության պարտքի միջին տոկոսադրույքը 2022թ. օգոստոսի 31-ի դրությամբ կազմել է 5.75%, ինչը 2021թ. դեկտեմբերի 31-ի համապատասխան ցուցանիշի համեմատությամբ ավել է 1.07 տոկոսային կետով, 2021թ. օգոստոսի 31-ի համեմատությամբ ավել է 1.28 տոկոսային կետով, իսկ 2020թ. օգոստոսի 31-ի համեմատությամբ ավել է 1.23 տոկոսային կետով:

ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքում ըստ թողարկման (ներգրավման) ժամկետայնության 2022թ. օգոստոսի 31-ի դրությամբ՝

1) կարճաժամկետ պարտքի բաժինը կազմել է 1.56%, ինչը 2021թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ մեծ է 0.36 տոկոսային կետով, 2021թ. օգոստոսի 31-ի և 2020թ. օգոստոսի 31-ի համեմատությամբ մեծ է է 0.53 տոկոսային կետով,

2) միջնաժամկետ պարտքի բաժինը կազմել է 12,01%, ինչը 2021թ. դեկտեմբերի 31-ի, 2021թ. օգոստոսի 31-ի և 2020թ. օգոստոսի 31-ի համեմատությամբ մեծ է համապատասխանաբար՝ 2.9, 4.68 և 5.53 տոկոսային կետերով,

3) երկարաժամկետ պարտքի բաժինը կազմել է 86.43%, ինչը 2021թ. դեկտեմբերի 31-ի, 2021թ. օգոստոսի 31-ի և 2020թ. օգոստոսի 31-ի համեմատությամբ փոքր է համապատասխանաբար՝ 3.26, 5.21 և 6.06 տոկոսային կետերով:

ԱԺԲԳ

ՏԵՂԵԿԱՆՔ
ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐՏՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 2022-2024 ԹԹ. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՈՒՂԵՆՇԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (2020-2022թթ. օգոստոս ամսվա վերջի դրությամբ)

ՀՀ կառավարության պարտքի մինչև մարում միջին ժամկետը, տարի



Առաջիկա 365 օրվա ընթացքում մարման ենթակա ՀՀ կառավարության պարտքի տեսակարար կշիռը (պետական գանձապետական պարատոմսերի գծով), %



ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքն ըստ տոկոսադրույքի, %



ՀՀ Կառավարության ներքին և արտաքին պարտքի կշիռները, %



ՀՀ կառավարության պարտքի կառավարման 2022-2024թթ. ռազմավարական ծրագրով՝

1) պարտքի մինչև մարում միջին ժամկետի ուղենշային ցուցանիշը սահմանված է 8-11 տարի: ՀՀ կառավարության պարտքի մինչև մարում միջին ժամկետը 2022թ. օգոստոսի 31-ի դրությամբ կազմել է 8.06 տարի: Այս ցուցանիշը 2021թ. օգոստոսի 31-ի դրությամբ արձանագրված ցուցանիշից պակաս է 0.62 տարով, իսկ 2020թ. օգոստոսի 31-ի ցուցանիշից՝ 0.73 տարով;

2) առաջիկա 365 օրվա ընթացքում մարման ենթակա ՀՀ կառավարության պարտքի տեսակարար կշռի (պետական գանձապետական պարատոմսերի գծով) ուղենշային ցուցանիշը սահմանված է առավելագույնը 20%: Առաջիկա 365 օրվա ընթացքում մարման ենթակա ՀՀ կառավարության պարտքի տեսակարար կշիռը (պետական գանձապետական պարատոմսերի գծով) 2022թ. օգոստոսի 31-ի դրությամբ կազմել է 9.72%, որը 2021թ. օգոստոսի 31-ի և 2020թ. օգոստոսի 31-ի դրությամբ արձանագրված մակարդակներից փոքր է 1.31 և 2.16 տոկոսային կետերով:

3) ֆիքսված տոկոսադրույքով պարտքի կշռի ուղենշային ցուցանիշը սահմանված է առնվազն 80%: ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքն ըստ տոկոսադրույքի 2022թ. օգոստոսի 31-ի դրությամբ ունեցել է հետևյալ պատկերը. ֆիքսված տոկոսադրույքով՝ 83.81%, լողացող տոկոսադրույքով՝ 16.19%: Ընդ որում, 2022թ. օգոստոսի 31-ի դրությամբ արձանագրված ֆիքսված տոկոսադրույքի ցուցանիշը 2021թ. օգոստոսի 31-ի ցուցանիշից ավել է1.23 տոկոսային կետով, իսկ 2020թ. օգոստոսի 31-ի ցուցանիշից ավել է 2.76 տոկոսային կետով:

4) ներքին պարտքի ուղենշային ցուցանիշը սահմանված է առնվազն 25.%, ՀՀ կառավարության ներքին և արտաքին պարտքի կշիռները 2022թ. օգոստոսի 31-ի դրությամբ ունեցել են հետևյալ պատկերը. արտաքին պարտք՝ 60.81%, ներքին պարտք՝ 39.19%: Ընդ որում, 2022թ. օգոստոսի 31-ի դրությամբ արձանագրված ներքին պարտքի կշռի ցուցանիշը 2021թ. օգոստոսի 31-ի և 2020թ. օգոստոսի 31-ի ցուցանիշները գերազանցում է համապատասխանաբար՝ 12.08 և 13.66 տոկոսային կետերով: